# Հոկտեմբերի 15-16-ին տեղի է ունեցել ճապոնական ավանդական շակուհաչիի (հնդկեղեգի ֆլեյտա) համերգ

Հոկտեմբերի 15-ին Գյումրիում Իտալիայի պատվավոր հյուպատոսի գրասենյակում, իսկ հոկտեմբերի 16-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում և Կոմիտասի թանգարան-ինստիտուտում տեղի է ունեցել ճապոնական ավանդական շակուհաչիի (հնդկեղեգի ֆլեյտա) համերգ: Համերգասրահը երկու օրերին էլ լեփ-լեցուն էր հանդիսատեսով, որը վայելում էր ճապոնացի անվանի ֆլեյտահար պրն. Իրիե Յոսուկեի կատարումները՝ արժանացնելով բուռն ծափահարությունների: Գյումրիում և Կոմիտասի թանգարան-ինստիտուտում քանոնահարուհի Տանյա Հարությունյանը հանդես եկավ իբրև հատուկ հյուր՝ նվագակցելով ճապոնացի երաժշտին:

Բացի այդ՝ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսորների և ուսանողների հետ համագործակցելով՝ համատեղ կատարմամբ հնչեց պրն. Իրիեի ստեղծագործությունը:



Պրն. Իրիե Յոսուկեի կատարումը



Ձախից՝ Գյումրիում Իտալիայի պատվավոր հյուպատոս պրն. Անտոնիո Մոնտալտոն, պրն. Իրիե Յոսուկեն, երաժշտական պրոդյուսեր տկն. Արաքսյա Մուշեղյանը, Տանյա Հարությունյանը, դեսպան Յամադան



Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր տկն. Հովհաննիսյանի և դեսպան Յամադայի ողջույնի խոսքը



Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողների հետ համատեղ կատարում



Տանյա Հարությունյանի (քանոնահար) հետ համատեղ կատարում



Պրն. Իրիեն սովորեցնում է շակուհաչի նվագել



Ձախից՝ Ազգային ժողովի փոխնախագահի տկն. Լենա Նազարյանը, դեսպան Ցամադան, ԱԳՆ Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների վարչության պետ պրն. Հովհաննիսյանը և այլք